**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ N 6/8**

ք. Երևան 9 փետրվարի 2023 թ.

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՍԹԵՄ ԴՊՐՈՑ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «ՍԹԵՄ դպրոց» կառուցվածքային ստորաբաժանման կանոնակարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2023 թ. փետրվարի 9-ի թիվ 6/8 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
# «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՍԹԵՄ ԴՊՐՈՑ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի պետական համալսարան հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) ՍԹԵՄ դպրոցը (այսուհետ՝ դպրոց) ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեությունը նպատակաուղղված է հանրակրթական, ինչպես նաև կրթական լրացուցիչ ծրագրերի իրականացմանը:
2. Դպրոցը գործում է կրթության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԵՊՀ կանոնադրության, սույն կանոնակարգի ու ստորաբաժանման ներքին իրավական այլ ակտերին համապատասխան:
3. Դպրոցում արգելվում է իրականացնել քաղաքական, ինչպես նաև կրոնական գործունեություն ու քարոզչություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
4. Դպրոցն ունի պաշտոնաթուղթ ու անհատականացման այլ միջոցներ:

## 2. ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Դպրոցի նպատակներն են՝

1) աշակերտների (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) զարգացման առանձնահատկություններին ու կարողություններին համապատասխան՝ կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ու հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովումը,

2) աշակերտների մտավոր, հոգևոր ու բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը,

3) դպրոցի որակի ներքին ապահովումն ու շարունակական բարելավումը,

4) հեղինակային ծրագրերի իրականացման միջոցով հանրակրթական միջավայրի բարելավմանը նպաստելը:

6. Դպրոցի՝ սահմանված նպատակների իրականացման խնդիրներն են՝

1) յուրաքանչյուր սովորողի կրթության հասանելիության, մասնակցության հավասար հնարավորության ու կրթական, այդ թվում՝ հեղինակային ծրագրերի իրականացման որակի ապահովումը,

2) հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքներին համապատասխան ուսուցման կրթության բովանդակության նորարար, սովորողակենտրոն, արդյունավետ մեթոդների ու ձևերի ընտրությունը,

3) յուրաքանչյուր սովորողի՝ կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունն ու ֆիզիկական հարմարեցված միջավայրի մատչելիության ապահովումը,

4) հանրակրթության ոլորտում հեղինակային, ստեղծագործական, նորարարական, ուսումնական, մեթոդական, խորհրդատվական ու մանկավարժական գործունեության իրականացումը,

5) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, հակումներն ու ընդունակությունները:

7. Դպրոցն իրավասու է՝

1) իրականացնել հանրակրթական, այդ թվում՝ հեղինակային ծրագրեր՝ անվճար ու վճարովի հիմունքներով (տարրական, հիմնական ու միջնակարգ մակարդակներում), առկա, ըստ անհրաժեշտության՝ նաև հեռավար ուսուցման ձևով,

2) իրականացնել սովորողների նախասիրությունների ու կրթական պահանջմունքների բավարարման նպատակով կրթական լրացուցիչ ծրագրեր,

3) իր իրավասությունների ու նպատակների շրջանակում համագործակցել ներպետական ու միջազգային կազմակերպությունների, դպրոցների, հիմնարկների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ,

4) կազմակերպել դիմորդների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն ու ուսումնական գործընթացը,

5) կազմակերպել մանկավարժական ու վարչական աշխատողների որակավորման բարձրացման, վերապատրաստման ու կրթական լրացուցիչ ծրագրեր, ինչպես նաև ատեստավորում,

6) կազմել ու ԵՊՀ ռեկտորի միջոցով հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնել իր կառուցվածքն ու հաստիքացուցակը,

7) կազմակերպել աշխատողների համալրումը (ընտրություն ու բաշխում) ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով ու դպրոցի ներքին իրավական այլ ակտերով սահմանված կարգով, այն ներկայացնել ռեկտորի հրամանագրմանը,

8) մասնակցել պետության կողմից հանրակրթության ոլորտի քաղաքականության ու ռազմավարությունների մշակման աշխատանքներին,

9) սահմանել դպրոցում սովորելու ուսման վճարները, սովորողների սոցիալական աջակցության ու կրթաթոշակների հատկացման կարգն ու պայմանները,
10) իրականացնել ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքներ,
11) ԵՊՀ գիտահետազոտական լաբորատորիաներում, ինստիտուտներում, կենտրոններում, ուսումնաարտադրական բազաներում կազմակերպել սովորողների գործնական ուսուցումը, դաստիարակությունն ու հանգիստը,
12) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ ու սույն կանոնակարգով չարգելված այլ գործառույթներ:

## 3. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Դպրոցը, ըստ կրթական մակարդակների, կարող է իրականացնել հանրակրթական ծրագրեր՝ տարրական, հիմնական, միջնակարգ (ավագ):
9. Ուսումնական խմբերը՝ դասարանները, կազմավորվում են՝ ըստ սովորողների տարիքի ու նրանց կողմից ուսումնական ծրագրի յուրացման արդյունքների:
10. Հանրակրթական ծրագրերի ավարտին ստուգվում է սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին, իրականացվում է պետական ամփոփիչ ատեստավորում, և տրվում է հանրակրթական ծրագրերի յուրացումը հավաստող պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (ատեստատ), ինչպես նաև կրթական հեղինակային ծրագրի ավարտական վկայական:
11. Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ ու ամփոփիչ (կիսամյակային ու տարեկան) գնահատումը, դրա ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է դպրոցը՝ հանրակրթության պետական չափորոշչին ու նորմատիվ ու ներքին իրավական այլ ակտերին համապատասխան:
12. Դպրոցն ուսումնական պլանները կազմում է՝ հաշվի առնելով հանրակրթական կրթական ծրագրերի առանձնահատկությունները:
13. Դպրոցը ԵՊՀ պաշտոնական կայքում հրապարակում է սույն կանոնակարգը, կրթական ծրագրերը, սովորողների ընդունելության, փոխադրման, ավարտման ու քննությունների կազմակերպման կարգերը, դպրոցի զարգացման ծրագիրը, տարեկան գործունեության հաշվետվությունները, ինչպես նաև դպրոցի գործունեությանն առնչվող, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող այլ տեղեկություններ:

## 4. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

14. Դպրոցի կառավարման մարմիններն են՝
1) դպրոցի խորհուրդը,
2) դպրոցի տնօրենը:

15. Դպրոցի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) դպրոցի կոլեգիալ կառավարման ու կազմակերպման մարմինն է: Խորհրդի անդամների թիվը 8 է: Խորհրդի անվանական կազ
16. մը հաստատում է ԵՊՀ ռեկտորը:
17. Խորհրդի կազմը ձևավորվում է 5 տարի ժամկետով: Խորհրդի կազմում ընդգրկված են՝
   1) 2 անդամ հանրակրթության ոլորտի արտաքին ներկայացուցիչներից՝ ռեկտորի ներկայացմամբ,
   2) 2 անդամ դպրոցի ուսուցչական կազմից՝ մանկավարժական խորհրդի ներկայացմամբ,
   3) 2 անդամ՝ ԵՊՀ ռեկտորի նշանակմամբ,
   4) 2 անդամ՝ ԵՊՀ գիտական խորհրդի ներկայացմամբ:

Դպրոցի ուսուցչական կազմից ԵՊՀ ռեկտորը նշանակում է խորհրդի երկու անդամ երկու ամիս ժամկետով, որից հետո մանկավարժական խորհուրդը ներկայացնում է խորհրդի երկու անդամ:

17. Խորհրդակցական ձայնի իրավունքով խորհրդի նիստին կարող են մասնակցել աշակերտական խորհրդի մեկ ներկայացուցիչ ու ծնողական խորհրդի նախագահը:
18. Խորհրդի նախագահին իրենց կազմից ընտրում են խորհրդի անդամները խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
19. Խորհուրդը՝
   1) հաստատում է իր աշխատակարգը,
   2) տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է ընթացիկ վերահսկողություն,
   3) հաստատում է դպրոցի զարգացման ծրագիրը,
   4) լսում ու գնահատում է տնօրենի՝ զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունը,
   5) տնօրենի ներկայացմամբ քննարկում է դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշիվի, հաստիքացուցակի նախագծերը ու տնօրենի միջոցով ներկայացնում ԵՊՀ ռեկտորին,
   6) քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժա-հոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,
   7) քննարկում է արտաքին ու ներքին գնահատման արդյունքները,
   8) հաստատում է մանկավարժական խորհրդի ու մեթոդական միավորման կանոնակարգերը:
20. Խորհրդի անդամը պարտավոր է՝
   1) սույն կանոնակարգով սահմանված կարգով մասնակցել խորհրդի նիստերին, գործել բարեխղճորեն՝ ի նպաստ աշակերտի շահերի ու կրթության արդյունավետության,
   2) պատշաճորեն կատարել սույն կանոնակարգով սահմանված ու խորհրդի հանձնարարականներով իրեն վերապահված պարտականությունները:
21. Խորհրդի առաջին նիստը գումարվում է խորհրդի կազմի հաստատումից հետո տասնօրյա ժամկետում:
22. Խորհրդի նախագահը՝
   1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,
   2) նախագահում է խորհրդի նիստերը,
   3) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը և ստորագրում դրանք:

23. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի որոշմամբ նրա պարտակա-նությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:
24. Խորհրդի նիստերը գումարվում են նախագահի կողմից տարին առնվազն չորս անգամ, ինչպես նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ու օրակարգով խորհրդի նախագահին համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո տասնօրյա ժամկետում: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:
25. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստի ներկա անդամների ձայների մեծամաս-նությամբ:
26. Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի մեկ ձայնի իրավունք: Չի թույլատրվում ձայնի փոխանցումն այլ անդամի:
27. Խորհրդի նիստերն արձանագրվում են:
28. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝
1) խորհրդի նախագահի անունով գրավոր դիմում ներկայացնելու,
2) խորհրդի ¾-ի որոշմամբ,
3) մեկ տարվա ընթացքում խորհրդի առնվազն երեք նիստից անհարգելի բացակայելու,
4) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու,
5) նրա մահվան,
6) դպրոցի լուծարման դեպքերում:
29. Դպրոցի տնօրենը՝
1) ղեկավարում է դպրոցի ընթացիկ գործունեությունը,
2) խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի զարգացման ծրագիրն ու դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը,
3) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության, առաջադիմության ու հաստատության ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների ու սովորողների էթիկայի և վարքագծի կանոնների նկատմամբ,
4) խորհրդի հավանությանն է ներկայացնում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները,
5) խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշվի, հաստիքացուցակի ու բյուջեի կատարողականի նախագծերը,
6) աջակցում է դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին,
7) մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է դպրոցի ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տեղակալի, դաս-ղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժների հաշվետվությունները,
8) մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով,
9) բաշխում է աշխատողների միջև աշխատանքը և վերահսկում դրանց իրականացումը,
10) տնօրենի տեղակալի ներկայացմամբ հաստատում է ուսումնական պարապմունքների դասացուցակը ու ուսումնադաստիարակչական աշխատանքներին առնչվող հաշվետվութ-յունները,

11) խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը,

12) աջակցում է ուսուցիչների մասնակցությանը հերթական ու կամավոր ատեստավորումներին և ԵՊՀ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին,

13) իրականացնում է վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, առաջադիմության, նրանց վարքի, արտադասարանական ու արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

14) ուսումնական պլանին համապատասխան՝ ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի բովանդակության համար,

15) ապահովում է դպրոցում գործավարության ու փաստաթղթաշրջանառության պատշաճ իրականացումը,

16) ապահովում է դպրոցի խորհրդի որոշումների կատարումը,

17) սույն կանոնակարգով իրեն վերապահված գործառույթների շրջանակում ներկայացնում է դպրոցը պետական և այլ կազմակերպություններում,

18) սույն կանոնակարգով սահմանված իր լիազորությունների սահմաններում տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ ու հրահանգներ, վերահսկում դրանց կատարումը,

19) իրականացնում է սույն կանոնակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

30. Դպրոցի տնօրենը նշանակվում է ԵՊՀ ռեկտորի կողմից:

31. Տնօրենը դպրոցի գործունեության հաշվետվությունն ու ամենամյա ծախսերի նախահաշիվը ԵՊՀ ռեկտորին ներկայացնում է մինչև ընթացիկ տարվա նոյեմբեր ամիսը, իսկ բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը:

32. Դպրոցում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համակարգի գործարկման, փոխհամագործակցության ու ծառայությունների ապահովման պատասխանատուն տնօրենն է, աշխատանքները համակարգում է տնօրենի տեղակալը, իսկ ծառայություններն իրականացնում են դպրոցի մանկավարժական աշխատողները՝ ըստ պաշտոնի նկարագրով սահմանված գործառույթների:

33. Տնօրենի բացակայության դեպքում ռեկտորի հրամանով տնօրենի պաշտոնակատար է նշանակվում տնօրենի տեղակալը, իսկ անհնարինության դեպքում՝ դպրոցի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից մեկը:

34. Տնօրենի լիազորությունները դադարում են ԵՊՀ ռեկտորի հրամանով:

35. Դպրոցի տնօրենն ունի տեղակալ: Դպրոցի տնօրենի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր) կապված անձը չի կարող լինել դպրոցի տնօրենի տեղակալ: Դպրոցի տնօրենի տեղակալը նշանակվում է ԵՊՀ ռեկտորի կողմից տնօրենի ներկայացմամբ:

36. Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում,

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը ու մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, նպաստում է դրանց ապահովմանը,

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի ու ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը,

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրենին ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների ու վարքի մասին տեղեկատվություն,

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ,

7) դպրոցի խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

## 5. ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

37. Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորում, ծնողական, աշակերտական խորհուրդներ:

38. Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է բոլոր մանկավարժական աշխատողներից, ծնողական խորհրդի նախագահից ու աշակերտական խորհրդի մեկ ներկայացուցիչներից տնօրենի հրամանով ու մեկ ուսումնական տարի ժամկետով (օգոստոսին):

39. Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝

1) ըստ հանրակրթության պետական չափորոշչի՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի ու առողջության պահպանմանը համապատասխան՝ հաշվի առնելով նաև հեղինակային ծրագրերի առանձնահատկությունները,

2) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը,

3) ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական ու արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների ու ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը,

4) հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների ու ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր,

5) դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, մեթոդական, առողջապահական ու այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը,

6) ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր,
7) դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

40. Մանկավարժական խորհուրդը քննարկում ու դպրոցի տնօրենին խորհրդատվական կարծիք է հայտնում հետևյալ հարցերի.

1) սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու,
2) սովորողներին քննություններին թույլատրելու,
3) որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու,
4) բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման ու քննությունների անցկացման ժամանակացույցի,
5) սովորողների վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու,
6) դպրոցի շրջանավարտներին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու,
7) օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու,
8) դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման վերաբերյալ՝ այն հաստատման ներկայացնելով տնօրենին:

41. Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է դպրոցի տնօրենը, որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

42. Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է մանկավարժական խորհրդի անդամներից ընտրված քարտուղարը, որի բացակայության դեպքում նիստն արձանագրում է անդամներից մեկը մանկավարժական խորհրդի որոշմամբ: Նիստի արձանագրությունը կազմվում է երկօրյա ժամկետում, ստորագրվում է մանկավարժական խորհրդի նախագահի կողմից:

Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել արտահերթ նիստեր տնօրենի կամ մանկավարժական խորհրդի 1/3-ի նախաձեռնությամբ և նախաձեռնողի օրակարգով ու համապատասխան ժամկետում:

43. Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ դպրոցի աշխատողներին պատշաճորեն տեղեկացնում է մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, ժամի ու օրակարգի մասին:

44. Մանկավարժական խորհրդի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

45. Մանկավարժական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

46. Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն այլ անդամի արգելվում է:

47. Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումն ապահովում է դպրոցի տնօրենը և արդյունքների մասին պարբերաբար զեկուցում է մանկավարժական խորհրդին:

48. Առարկայական մեթոդական միավորումը՝

1) քննարկում է հեղինակային ծրագրերն ու առարկաների նկարագրերը, ուսումնական պլանների նախագծերը, փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ,

2) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում,

3) նպաստում է ուսուցիչների (դասվարների) որակավորման բարձրացմանը,

4) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) նախապատրաստում է ատեստավորման,

5) կազմակերպում է մասնագիտական ու մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ,

6) ուսուցիչներին ներկայացնում է մանկավարժության նորագույն նվաճումները, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ,

7) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն,

8) կազմակերպում է առարկայական մրցույթներ ու այլ միջոցառումներ:

49.Առարկայական մեթոդական միավորման նիստերի հրավիրումը, անցկացումը, արձանագրությունների վարման կարգը սահմանվում են իրենց աշխատակարգով, որը հաստատվում է դպրոցի խորհրդի կողմից:

50. Ծնողական խորհուրդը ձևավորվում է աշակերտների ծնողների ընդհանուր ժողովի կողմից: Ծնողական խորհուրդն ունի նախագահ և մինչև 5 անդամ: Ծնողական խորհրդի նախագահը դպրոցի խորհրդի անդամ է՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

51. Ծնողական խորհրդի նիստերի ժամանակացույցը, դրանց հրավիրման, անցկացման, արձանագրությունների վարման կարգը սահմանվում են իր աշխատակարգով, որը հաստատվում է ծնողական խորհրդի կողմից:

52. Դպրոցի ծնողական խորհուրդը՝

1) դպրոցի տնօրենի կամ խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ,

2) աջակցում է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում,

3) ներկայացնում է ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, մասնակցում դրանց մշակման ու տրամադրման միջոցառումներին,

4) լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները,

5) նպաստում է դպրոցի ու ծնողների միջև կապերի ամրապնդմանը, մանկավարժական աշխատողների ու ծնողների կողմից երեխաների դաստիարակության նկատմամբ ձևավորում է միասնական պահանջներ,

6) ապահովում է սովորողի իրավունքների պաշտպանությունը դպրոցում,

7) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ,

8) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին ու օրենքով սահմանված պատասխանատվությանը:

53. Դպրոցի սովորողների ինքնավարության ու ինքնակառավարման ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության ու ինքնավարության սկզբունքներին համապատասխան՝ դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքների ազատ արտահայտումն ապահովելու, դրանք դպրոցի կառավարման ու խորհրդակցական մարմիններ ներկայացնելու, սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնակարգի դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով: Աշակերտական խորհրդի մեկ ներկայացուցիչ դպրոցի խորհրդի անդամ է՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

54. Աշակերտները, ըստ իրենց հետաքրքրությունների ոլորտների, կարող են նաև ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են:

## 6. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

55. Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցներն են՝

1) սովորողը,

2) սովորողի ծնողը,

3) ուսուցիչն ու մանկավարժական այլ աշխատողներ,

4) վարչական աշխատողները:

56. Դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ:

57. Սովորողն իրավունք ունի՝

1)ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն,

2) անվճար օգտվելու դպրոցի ուսումնանյութական բազայից,

3) ստանալու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բավարարմանն ուղղված աջակցություն,

4) մասնակցելու ներդպրոցական ու արտադպրոցական միջոցառումների,

5) պաշտպանված լինելու ֆիզիկական ու հոգեբանական ցանկացած ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է կատարվում նրա պատվի ու արժանապատվության նկատմամբ,

6) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,

7) խրախուսվելու օրինակելի վարքի կամ բարձր առաջադիմության համար,

8) օգտվելու օրենքով ու ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ իրավունքներից:

58. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել դպրոցի կանոնակարգով ու ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների ու կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները,

3) հաճախել ու մասնակցել ուսումնական պարապմունքներին,

4) կատարել օրենքով ու դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված ու ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

59. Դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ ու ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն ու սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի ու առողջ ապրելակերպի հմտություններ՝ ըստ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

60. Յուրաքանչյուր սովորող տարեկան առնվազն մեկ անգամ սահմանված կարգով անցնում է բժշկական (կանխարգելիչ) հետազոտություն:

61. Դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, սույն կանոնակարգով, էթիկայի ու վարքագծի կանոններով և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

62. Դպրոցի էթիկայի ու վարքագծի, ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճորեն կատարելու, դպրոցի ու սովորողի կամ սովորողի ծնողի միջև կնքված պայմանագրի կետերը չպահպանելու դեպքում օրենքով ու սույն կանոնակարգով սահմանված կարգով սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1) նկատողություն,
2) խիստ նկատողություն,
3) դպրոցից ազատում:

63. Նկատողությունն ու խիստ նկատողությունը տրվում են դպրոցի տնօրենի, իսկ սովորողի՝ դպրոցից ազատումը՝ ռեկտորի հրամանով:

64. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, օրինակելի ու կարգապահ սովորող:

65. Սովորողների համար հիմնադրի, դպրոցի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական ու նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր ու դրամական խրախուսում:

66. Դպրոցում խրախուսանքի այլ միջոցներ ու ձևեր, ինչպես նաև խրախուսանքի միջոցներ կիրառելու կարգը սահմանում է խորհուրդը:

67. Սովորողի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը ոչ պատշաճորեն կատարելու կամ չկատարելու դեպքում, եթե դրա

հետևանքով երեխայի առողջությանը վնաս է պատճառվել, այն անձինք, որոնց վրա դրված են այդ պարտականությունները, կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

68. Սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են նրանց օրինական ներկայացուցիչների հետ կնքված պայմանագրով, ԵՊՀ ներքին կարգապահական կանոններով և ներքին իրավական այլ ակտերով:

69. Դպրոցի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով, աշխատանքի նկարագրով (պաշտոնի անձնագիր), ԵՊՀ ներքին կարգապահական կանոններով, ներքին իրավական այլ ակտերով ու տնօրենի հանձնարարականներով:

70. Աշխատողներն ունեն օրենքով, ԵՊՀ կանոնադրությամբ, սույն կանոնակարգով, ներքին իրավական այլ ակտերով, ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում են այդ ակտերով նախատեսված պատասխանատվությունը (սահմանափակումներ):

## 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

71. Սույն կանոնակարգը, նրանում կատարվող լրացումներն ու փոփոխությունները կատարվում են են ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ԵՊՀ կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

72. Դպրոցի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

73. Սույն կանոնակարգը հրապարակվում է ԵՊՀ կայքում: